

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ

4

**САРГИС ВАРФОЛОМЕЕВИЧ
АРУТЮНЯН**

БИОБИБЛИОГРАФИЯ
ВВЕДЕНИЕ, БИБЛИОГРАФИЯ
АЛВАРД ГАЗИАН

Издательство "Мугни"
Еревани2003

ARMENIAN REPUBLIC
NATIONAL ACADEMY OF SCIENCES

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY .

HONORED SCIENTISTS

4

SARGIS B. HAROUTUNYAN

BIOBIBLIOGRAPHY
INTRODUCTIONиBIBLIOGRAPHY
BY ALVARD GAZIAN



Publishing House "MugniB"
Yerevani2003

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЗАСЛУЖЕННЫЕ УЧЕНЫЕ

4

**САРГИС ВАРФОЛОМЕЕВИЧ
АРУТЮНЯН**

БИОБИБЛИОГРАФИЯ
ВВЕДЕНИЕ, БИБЛИОГРАФИЯ
АЛВАРД ГАЗИЯН

Издательство "Мугни"
Еревани 2003

ARMENIAN REPUBLIC
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY .

HONORED SCIENTISTS

4

SARGIS B. HAROUTUNYAN

BIOBIBLIOGRAPHY
INTRODUCTION и BIBLIOGRAPHY
BY ALVARD GAZIAN

Publishing House "MugniB"
Yerevani 2003

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության ԳԱԱ
ինագիտության և ազգագրության ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

խմբագրական հանձնախումբ.

Ա. Քալանթարյան (նախագահ), Ս. Հարությունյան,
Դ. Վարդունյան, Գ. Գրիգորյան, Գ. Կարախանյան

Պատասխանատու խմբագիր՝ Ա. Քալանթարյան

Печа2ае2сяяпо решениюУченого2сове2а
h нс2и232а археологииия2нографии НАН РА

Редакционна коллеги :

А. Калан2ар н (предсе2аель)иС. Ар32юн ни
Д.2ард3м ниГ. Григор ниГ. Кара. ан н

Отвественный редактор: А. Калан2ар н

Հ 422 Սարգիս Հարությունյան: Կենսամատենագիտություն /Կազմ. Ա.
Ղազիյան.- Եր.: «Մուղնի» հրատ., 2003, 48 էջ.- (Վաստակաշատ գիտ-
նականներ):

Բազմավաստակ բանագետ-հայագետ Սարգիս Հարությունյանի սույն մատենագի-
տությունն ընդգրկում է հեղինակի տպագիր աշխատությունների ցանկը (որոշ բացթի-
ղումներով), նրա կյանքն ու գիտական գործունեությունը բնութագրող համառոտ ալ-
մարկով:

Այն նախատեսված է հայագետների և հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցող-
ների լայն հասարակայնության համար:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (բազմավաստակ գիտնականի ծննդյան 75 -ամյակի առթիվ)

Հայագիտությունը, մասնավորապես հայ բանագիտության պատմությունը, սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից իրենից ներկայացնում է մի անընդհատ շղթա, որի յուրաքանչյուր օղակը նշանավորվում է մի վաստակավոր հայագետ-բանագետի անունով և որը ժառանգելով իր նախորդների փորձն ու ձեռքբերումները, յուրացնելով իր ժամանակի գիտության նվաճումները, մի նոր աստիճանի է բարձրացրել հայագիտության տվյալ մասնաճյուղը: Այդ շղթայի մեջ իր արժանի տեղն ունի Սարգիս Հարությունյանը: 20-րդ դարի 50 -ական թվականներից ի վեր նա անխոնջ նվիրումով ծառայում է հայագիտությանը, հայագիտության կարևոր ճյուղերից՝ բանագիտությանը, իր մեծարժեք հետազոտություններով ու գիտական հրատարակություններով հարստացնում այն:

Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը ծնվել է 1928թ. սեպտեմբերի 22 -ին ՀՀ Աշոցքի (նախկին Ղուկասյան) շրջանի Ղազանչի գյուղում, գյուղացու ընտանիքում: Հարությունյան ընտանիքը 1940թ. տեղափոխվել է Թբիլիսի: 1947թ. Ս. Հարությունյանն ավարտել է քաղաքի № 26 արական հայկական դպրոցը և նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը (պարսկերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ): 1952թ. ավարտելով համալսարանը՝ աշխատանքի է անցել Հայպոլիգրաֆ հրատարակչության վարչությունում և տարբեր պաշտոններ վարել մինչև 1956թ.:

1956թ. Ս. Հարությունյանն ընդունվել է Հայաստանի ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: 1959թ. ավարտելով ասպիրանտուրան, հաջորդությամբ պաշտպանել է «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը: Նույն թվականին Ս. Հարությունյանն աշխատանքի է անցել Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտում կրտսեր գիտաշխատակցի պաշտոնով: 1960թ. նա փոխադրվել է նորակազմ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, ուր աշխատում է ցարդ: Սկզբում պաշտոնավարել է իբրև կրտսեր, ապա ավագ, գլխավոր գիտաշխատող, հետագայում՝ բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնի վարիչ (1972թ.), իսկ 1992թ.՝ ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ: 1971թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» թեմայով: 2000թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ:

Ս. Հարությունյանը բանագիտական գործունեությունն սկսել է ակադեմիկոս Ա. Ղանալանյանի ղեկավարությամբ: Հայ ժողովրդական հանելուկների հետազոտությունը, այնուհետև այդ ժանրի բնագրերի համահավաք գիտական հրատարակությունը հանգամանալից ծանոթագրություններով, 60 -ականին լույս ընծայած հայ բանահյուսությանն ու ականավոր հայագետներին նվիրված հոդվածները նախանշեցին նրա բանագիտական հետաքրքրությունների շրջանակները, որոնք ընդգրկելու էին վիպական փոքր ժանրերը, վիպական բանահյուսությունը, հատկապես հայոց ազգային հերոսավեպը, հմայական բանահյուսությունն իր տարատեսակներով, առասպելաբանությունը, հայ հին գրականությունը, հայագիտության պատմությունը, արևելագիտության որոշ հարցեր, գրական ու բանահյուսական փոխառնչություններ:

Հայ ժողովրդական հանելուկների մենագրական հետազոտությունը (1960թ.) և ժանրային համահավաքի հրատարակությունը (1965թ.) գրավեցին գիտական հասարակության ուշադրությունը: Հայոց աշխարհի գրեթե բոլոր պատմա-ազգագրական շրջաններից հավաքած, ձեռագիր ու տպագիր աղբյուրներից քաղած, ի մի բերած ու ժամանակի առաջավոր գիտա-

կան մեթոդով դասակարգած այդ մենագրությունն ու ժողովածուն աչքի էին ընկնում ժանրի յուրահատկությունների սպառնիչ բնութագրմամբ, հանելուկի և բանահյուսության մյուս ժանրերի աղերսների լուսաբանմամբ, հանելուկի գեղարվեստական առանձնահատկությունների բացահայտմամբ, ժանրի ծագման, ակունքների, մասնավորապես հնագույն առասպելական շերտերի առկայությունը հաստատող համոզիչ գիտական մեկնաբանությամբ, հանելուկի կենցաղավարման ու գործառույթի առանձնահատկությունների ճշտմամբ:

Առանձնակի ուշադրության են արժանի ցորենի (1969թ.) և ճրագի(1981թ.) հանելուկների վերաբերյալ նրա փոքրածավալ հոդված-ուսումնասիրությունները: Նա բացահայտեց ու հիմնավորեց առաջինի կապը հին արևելյան մեռնող և հառնող աստծո առասպելի, իսկ երկրորդի՝ արևի աստծո մասին առասպելի հետ: Այդպիսով նա հավաստեց հայ ժողովրդի և հին արևելյան, առաջավորասիական հնագույն ժողովուրդների հոգևոր մշակույթների միջև գոյություն ունեցող ընդհանրությունները:

Հայոց առասպելների վերաբերյալ իր ուսմունքը Ս. Հարությունյանն առավել ամբողջացրեց ու հարստացրեց հետագա տարիների ուսումնասիրություններում՝ հայ վիպական բանահյուսության, մասնավորապես ազգային վեպի հայտնի ու նորահայտ պատումների ընձեռած տվյալներով ու իրողություններով:

Մոսկվայում «Мифы народов мира» երկհատորյակում (1981, 1982թթ.), այնուհետև «Мифологический словарь» -ում (1990թ.) լույս տեսավ նրա ռուսերեն լեզվով հոդվածաշարը հայոց առասպելների մասին: Հոդվածաշարը թարգմանվեց գերմաներեն ու հունգարերեն, բերելով հեղինակին համաշխարհային ճանաչում: Հայ առասպելների քննությանը նվիրված նրա հիմնարար աշխատությունը «Հայ առասպելաբանություն» վերնագրով մենագրությունն է, որն արժանացավ Համազգային հայ կրթական և մշակութային միության մրցանակին (1994թ.) և նույն հաստատության միջոցով հրատարակվեց Բեյրութում՝ 2000թ.: Աշխատության նպատակը կանխորոշում է ինքը հեղինակը գրքի առաջաբանում: Բանահյուսության տվյալ ժանրի՝ առասպելի կազմախոսական հատկանիշների բացահայտման, իմաստավորման ու ձևավորման գործընթացի լուսա-

բանման հետ, բանագետը գտնում է, որ աշխատությունը «մյուս կողմից՝ նպատակ է հետապնդել գիտական հանրությանը ծանոթացնել ու ճանաչելի դարձնել հայկական ազգային ավանդության մեջ դարերով ձևավորված ու կուտակված առասպելաբանական տվյալների հարուստ ժառանգությունը, մասնավորապես հնդեվրոպական մշակույթի հետ վերջինիս ունեցած պատմական ու տիպաբանական աղերսները, ընդհանրություններն ու առանձնահատկությունները, դրանով իսկ հիմնավորել և բացահայտել այդ համընդհանուր մշակույթից հայերի ժառանգածն ու պահպանածը, միաժամանակ նույն մշակույթի մեջ հայկականի բերած նորոգ արտացոլումները»:

Այդ գրքին նվիրված արտասահմանցի գրախոսի (Վ. Մատթեոսեան) կարծիքով այդ աշխատությունը «իր կուռ շարադրանքով ու նորութեամբ պիտի արժէր թարգմանել արեւմտեան լեզուի մը»: Եվ ապա. «Ներկայացուած հում նիւթի ճոխութիւնը, վերլուծումի տրամաբանութիւնը և գիտական հէնքը բաւարար են զայն դասելու համար Մանուկ Աբեղեանի աշխատասիրութիւններու կողքին» (« Կամ, Հանդես վերլուծական», թիւ 5, Լոս Անճելէս, 2002, էջ 246-247):

Նրա բանագիտական գործունեության մյուս կարևոր բնագավառն ընդգրկում է հմայական բանահյուսության գրեթե բոլոր կարևոր ժանրերը: 1971թ. ռուսերեն լեզվով լույս է տեսնում «Реликты благословения при общественном жертвоприношении» վերնագրով նրա հոդվածը: 1975թ. հրապարակի վրա է հմայական բանահյուսության ուրույն ժանրերին նվիրված մենագրությունը՝ «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ», որի էջերում առաջին անգամ հայագիտության մեջ քննարկվում են անեծք-օրհնանքների կիրառական ու տիպաբանական առանձնահատկությունները՝ սկսած սեպագիր արձանագրություններից, վիմագրերից և այլ գրավոր ու բանավոր վկայություններից, անդրադառնալով նրանց ծագման, կազմավորման աղբյուրներին՝ մինչև նրանց իբրև ինքնուրույն ժանր ձևավորվելը: Բանահյուսության այս ժանրերի ուսումնասիրությունը նա ամբողջացրեց մի այլ հիմնարար աշխատությամբ՝ հայ ժողովրդական աղոթքների համահավաք բնագրի պատրաստմամբ՝ ներածական ուսումնասիրությամբ, հարուստ ծանոթագրություններով, առաջաբանով ու բառա-

րանով: Մեծածավալ այդ աշխատությունը ձեռագիր վիճակում սպասում է իր մեկենասին: Վերոհիշյալ աշխատություններով Ս. Հարությունյանը հայ բանագիտության մեջ հիմք է դրել հայկական հանելուկների, անեծք-օրհնանքների և առհասարակ հայ հմայական բանախոսության գիտական ուսմունքներին:

Ս. Հարությունյանի բանագիտական գործունեության ամենամեծածավալ և ամենաուշագրավ բնագավառը հայ բանահյուսության վիպական ժանրերն են, հատկապես ազգային հերոսավեպն ու վիպական բանահյուսության այլևայլ նմուշները:

Կարծում ենք, որ նրա գիտական հետաքրքրությունը վիպական բանահյուսության նկատմամբ սերում է նրա՝ Ս. Արեղյանի հանդեպ ունեցած պաշտամունքի հասնող սիրուց ու նվիրումից: Տակավին ասպիրանտ, նա «Սովետական Հայաստան» ամսագրում (1959թ., № 11) տպագրում է ականավոր հայագետին նվիրված հոդված՝ «Հայագիտության մեծ երախտավորը» վերնագրով: Եվ Ս. Արեղյանը մնում է ընդմիշտ նրա գիտական-մասնագիտական նախասիրությունների կենտրոնում: Ցարդ գիտական ամսագրերում ու հանդեսներում լույս է տեսել նրա՝ մեծանուն հայագետի գործունեությունը արժևորող ու լուսաբանող հինգ հոդված, մեկ ծավալուն մենագրություն («Մանուկ Արեղյան. կյանքն ու գործը», 678 էջ, 1970թ.): Հոդվածների շարքում հատկապես ուշագրավ են «Մանուկ Արեղյանի մշակած հայ վիպական ավանդության տեսական համակարգը» (1990թ.), «Մանուկ Արեղյանը և «Սասնա ծռեր» հերոսավեպը» (1992թ.), «Ս. Արեղյանը քննադատ» (1998): Այդ իսկ առումով մատնանշելի է նաև այն, որ մենագրության մեջ Ս. Հարությունյանը հատուկ բաժին է հատկացրել վիպական բանահյուսության վերաբերյալ Արեղյանի տեսությանը («Մանուկ Արեղյան», էջ 165 - 234): Ավելացնենք, որ Ս. Հարությունյանը սիրով ու գիտական անկշռելի բարեխղճությամբ կազմում, խմբագրում ու ծանոթագրում է Ս. Արեղյանի երկերի VII և VIII հատորները (1975 և 1985թթ.): Հայ վիպական բանահյուսության վերաբերյալ Ս. Հարությունյանի հայացքների բնութագրման առումով բնորոշ է նրա ռուսերեն հոդվածը, զետեղված Ս. Արեղյանի երկերի Ա հատորում՝ «Армянская эпическая словесность» վերնագրով (1966թ.): Ըստ էության նա այնուհետև հարստացրեց ու շարունակեց, նոր աստիճանի

բարձրացրեց Գ. Սրվանձտյանի, Մ. Աբեղյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի վիպագիտական ուսմունքը:

Եվ ամենևին պատահական չէ Ս. Հարությունյանի ազգային հերոսավեպի նոր պատումներ հայտնաբերելուն հետամուտ լինելը 1971 - 1973թթ.: 1973 թ. լրանում էր «Սասնա ծռեր» հերոսավեպի Գ. Սրվանձտյանի հայտնաբերած պատումի 100 - ամյակը: Ս. Հարությունյանը նախածեռնում և կազմակերպում է գիտական արշավախումբ՝ Հայաստանի տարբեր շրջաններում ապաստան գտած արևմտահայերի ու վերջիններիս հաջորդների միջավայրում վեպի պատումներ, վեպի վերաբերյալ նյութեր հավաքելու նպատակով: Նա առաջնորդվում է տվյալ պարագաներում Մ. Աբեղյանի սկզբունքով, որ աղճատված ու աննշան թվացող պատմվածքներն անգամ արժեք ունեն: Գիտարշավի արդյունքները եղան սպասածից ավելին: Եվ ահա հրապարակի վրա են ազգային հերոսավեպի գիտական հրատարակության հաջորդ Գ (1979թ.) և Դ (1999թ.) հատորները, որոնք կազմված են գերազանցապես գիտարշավի ընթացքում գրի առած պատումներից (Ա. Սահակյանի հեղինակակցությամբ): Ուշագրավ է, որ մինչ այդ վեպի հայրենիքից՝ Սասունցի վիպասացներից պատումներ քիչ են գրառվել, մինչդեռ Դ հատորը ամբողջապես բաղկացած է Սասնա պատումներից՝ գրառված անցյալում և մեր օրերում: Շարունակելով իր մեծ նախորդների գործը, հեղինակները հերոսավեպի հրատարակությունն օժտել են բարձրարժեք գիտական առաջաբան-ուսումնասիրություններով, ծանոթագրություններով, բառարաններով ու ցանկերով:

1977թ. լույս է տեսել Ս. Հարությունյանի կազմած՝ վեպի տասը ընտիր պատումներից բաղկացած մի ժողովածու, օժտված գիտական անհրաժեշտ ապարատով, «Կուլտուրալատմական ակնարկով»: Ըստ որում «Ակնարկում» քննվող հարցերը վերաբերում են «Սասնա ծռերին» ընդհանրապես: Ս. Հարությունյանը ոչ ծավալուն, սակայն բացառիկ գիտական արժեք ունեցող հետազոտության մեջ ավելի է խորացնում ու համապարփակ դարձնում Աբեղյանի ուսմունքը վեպի հնագույն շերտերի վերաբերյալ, միաժամանակ արժարժում հայ ժողովրդի ծագումնաբանությանն առնչվող մի շարք էական հարցեր, տալով դրանց հիմնավոր պատասխաններ հայ ժողովրդի՝ իբրև

հնդեվրոպական լեզվաընտանիքի ուրույն ճյուղը կազմող մի հանրության, որը կրել է հարևան սեմական աշխարհի, ինչպես նաև ազգակից Իրանի ազդեցությունը: Ս. Չարությունյանը գտնում է. «Իսկ վեպն իր չորս ճյուղերով անդրադարձնում է մեր ժողովրդի պատմության ամբողջ ընթացքն, սկսած իր ծագման վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը» (1977թ., էջ 640): Ս. Չարությունյանը հայ վիպական բանահյուսությունը, այդ թվում և ազգային հերոսավեպը դիտարկել ու լուսաբանել է հարևան ժողովուրդների (պարսիկների, քրդերի) հետ ունեցած փոխառնչությունների տեսադաշտում: Այդ առումով առանձին հետաքրքրություն են ներկայացնում «Սասնա ծռերի» արծագանքները «Շարաֆ նամեում» (1975թ., Հր. Բարթիկյանի հեղինակակցությամբ), «Իրանական հոգևոր մշակույթի արտացոլումները հայ հին ավանդության մեջ» (1994թ.) հոդված-ուսումնասիրությունները: Նա հիմնավոր կերպով հաստատում է այն տեսակետը, որ դարերով կողք-կողքի ապրող ժողովուրդների մշակույթներն ունեն ոչ միայն տիպաբանական ընդհանրություններ, նրանք փոխադարձաբար ազդում են միմյանց վրա, հարստացնում և հաճախ պահպանում արժեքավոր տեղեկություններ, ինչպես որ «Շարաֆ նամեում» է պահպանվել Դավթի վեպը, բայց «այլափոխված և վերաիմաստավորված» տեսքով: Այս հարցերին Ս. Չարությունյանն ըստ հարկի անդրադարձել է նաև իր մյուս աշխատություններում:

Ս. Չարությունյանի բանագիտական գործունեությունը վերջին տարիներին վերաբերում է առավելապես բանահյուսության քնարական ժանրերին, մասնավորապես խաղիկներին: Նրա անմիջական ղեկավարությամբ ու արդյունավետ մասնակցությամբ հրատարակության է պատրաստվել խաղիկների մի նոր համահավաք բնագիր, ընդգրկելով շուրջ 16000 անտիպ արխիվային ստեղծագործություն: Ձեռագիրը սպասում է իր հովանավորին: Բացի այդ նրա ղեկավարությամբ կազմվել է նաև խաղիկների մոտիվային համաբարբառը, առկա նյութի ամբողջական ընդգրկումով:

Անվանի բանագետի գործունեության մեջ որոշակի տեղ ունեն հայ գրականության, մասնավորապես հին և միջին շրջանին վերաբերող հարցերը, որոնց լուսաբանմանը, հայ բանահյուսության առանձին ժանրերի և գրականության կապի,

փոխազդեցությանն ու աղերսներին նա նվիրել է հողված-
ուսումնասիրություններ, մենագրական ակնարկներ, ինչպես
օրինակ՝ «Հայ գրականությունն ու ժողովրդական բանահյու-
սությունը V - VIII դարերում» («Հայ ժողովրդի պատմություն»,
հ. II, 1984, էջ 439 - 473), «Հնդեվրոպական տաղաչափության
մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին
բանաստեղծության և բանահյուսության մեջ» (1987թ.) և մի
շարք այլ հրապարակումներ, որոնք թեև անմիջականորեն չեն
վերաբերում գրականությանը, բայց արժարժում են բանա-
հյուսության և գրական երևույթների առնչությունները:

Հատուկ ուշադրության են արժանի Ս. Հարությունյանի հա-
յագիտության անվանի դեմքերին նվիրած հոդվածները
(Ս. Աբեղյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Գ. Հովսեփյան, Աս. Մնա-
ցականյան, Ա. Ղանալանյան և այլք): Նա կարողանում է գնա-
հատել ու արժևորել առանձին գործիչների վաստակը, ներ-
դրումը գիտության այս կամ այն ասպարեզում, շեշտում,
լուսաբանում այն բնագավառը, որը հատկապես համահունչ է
իր նախասիրությանը. նրա այդ բնույթի հրապարակումները
այսօր կարող են օրինակ ծառայել շատերի համար: Նա մի
առանձին ուսումնասիրություն ունի նվիրված նոր հայագիտա-
կան, մասնավորապես բանասիրական մտքի զարգացման հա-
մակարգված պատմությանը, որն ընդգրկում է 1870-1917թթ,
ժամանակաշրջանը («Հայ ժողովրդի պատմություն», հատ. VI,
էջ 898-920):

Ս. Հարությունյանը հմուտ ու լայնախոհ խմբագիր է, նրա
խմբագրած և հրապարակի վրա գտնվող գործերի թիվն անց-
նում է քսանից, այդ թվում այնպիսի մեծածավալ աշխատու-
թյուններ, ինչպիսին Ս. Աբեղյանի երկերի VII և VIII հատորները,
«Սասնա ծռերի» Գ, Դ հատորները, Ա. Ղանալանյանի «Դրվագ-
ներ հայ բանագիտության պատմության», Վ. Սվազյանի
«Կիլիկիա» աշխատություններն և այլն:

Ս. Հարությունյանը համընթաց քայլում է իր ժամանակի հետ,
արձագանքում հասարակությանը հուզող ազգային, մշակու-
թային ու կրթական խնդիրներին: Նա հեղինակ է նաև ավելի
քան 100 հանրագիտական, լրագրային հոդվածների ու գրախո-
սականների:

Ս. Հարությունյանը նշանակալից ծառայություններ ունի գի-

տական մշակումների, գիտա-կազմակերպչական աշխատանքների և մասնագետներ պատրաստելու ասպարեզներում. նրա գործում ղեկավարությամբ և բանագետների ողջ կոլեկտիվի մասնակցությամբ 1970-1980-ական թթ. ընթացքում վերամշակվեց ինստիտուտի բանահյուսական հարուստ արխիվը, ԷՀՄ-ի միջոցով կազմվեց արխիվի թվայնացված գլխավոր կատալոգը: Նա ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում ղեկավարել ու ղեկավարում է «Ժողովրդական բանահյուսություն, թատրոն և պարարվեստ» և «Ուսումնասիրություններ հայ բանահյուսության» թեմատիկ խմբերը, նաև բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժինը, ասպիրանտների և հայցորդների աշխատանքներ: Եվ ապա՝ երկար տարիներ «Բանագիտություն», «Հայ բանահյուսություն», «Հայ հին գրականության պատմություն» առարկաներ է դասավանդում Երևանի պետական համալսարանում և Հանրապետության մյուս ԲՈՒՀ-երում:

Ս. Հարությունյանի մենագրությունները, հոդվածները, հրատարակած բանահյուսական ժողովածուները, լինելով գիտական բարձրարժեք գործեր, ծառայել ու ծառայում են մի կարևոր նպատակի ևս. ժողովրդին ծանոթացնում են իր կենսագրությանը, վերադարձնում են նրա իսկ ստեղծած հոգևոր գանձերի, ազգային արժանապատիվ կեցությամբ աշխարհին ներկայանալու, իր նախնիների ստեղծածը պահելու, նրան հավատարիմ լինելու գիտակցությունը:

САРКИС АРУТЮНЯН

(к 75 –летию заслуженного учёного)

Со второй половины 19 в. история арменоведения, в частности, фольклористики, представляет собой непрерывную цепь имен арменоведов-фольклористов, каждый из которых унаследовав опыт и достижения предшественников, усвоив достижения науки своего времени, поднял арменоведение на качественно новую ступень. С 50-ых годов 20 в. в этой цепи достойное место занимает Саркис Арутюнян, который своей неутомимой преданностью науке служит одной из важнейших областей арменоведения-фольклористике и обогащает её своими плодотворными исследованиями и научными публикациями.

Саркис Арутюнян родился 22 сентября 1928 г. в деревне Казанчи Ашотского района (бывший Гукасян) РА в крестьянской семье. В 1940 г. семья переехала в Тбилиси, где в 1947 г. он закончил армянскую городскую мужскую школу № 26. В том же году С. Арутюнян поступил на восточнее отделение (персидский язык и литература) филологического факультета Ереванского государственного университета, по окончании которого он с 1952 до 1956 гг. занимал разные должности в Управлении издательства Армпполиграф.

В 1956 г. С. Арутюнян поступил в аспирантуру Института литературы им. М. Абеяна АН Арм.ССР по специальности „Армянское народно-поэтическое творчество“, закончив которую в 1959 г. он успешно защитил кандидатскую диссертацию на тему „Армянские народные

загадки". В том же году С. Арутюнян поступил на работу в Институт литературы им. М. Абега, но вскоре перешёл во вновь организованный Институт археологии и этнографии АН Арм. ССР, где работает до настоящего времени: в начале в качестве младшего научного сотрудника, затем - старшего и главного, в последующем - заведующего отделом документации фольклорных первоисточников, а с 1992 г. - заместителем директора института по науке. В 1971 г. он защитил докторскую диссертацию на тему „Материалы к истории жизни и деятельности М. Абега". В 2000 г. избран членом-корреспондентом НАН РА.

Своё фольклороведческое образование С. Арутюнян получил и исследовательскую деятельность начал под руководством академика А.Т. Ганалаяна. Исследования жанра армянских народных загадок, издание сводного текста загадок с подробными научными комментариями, публикации в 60-ых годах статей, посвящённых видным армянским арменоведцам - фольклористам, предопределили круг его научных интересов, который охватывает малые эпические жанры, эпический фольклор, в частности, армянский народный героический эпос, магический фольклор со своими поджанрами, мифологию, историю древнеармянской литературы, некоторые вопросы востоковедения и фольклорные взаимосвязи.

Издания монографии об армянских народных загадках (1960 г.) и сводного научного текста (1965 г.) привлекли внимание научной общественности. Собранные со всех историко - этнографических областей Армении, извлечённые из рукописных и печатных источников и классифицированные по современным передовым научным методам, они отличались определением особенностей жанра, выявлением взаимосвязей загадок с другими жанрами фольклора, раскрытием художественных особенностей загадок, убедительной научной интерпретацией происхождения загадок и их источников, в частности, существования в них древнейших мифологических пластов, уточнением их функций и ареалов бытования.

Особого внимания заслуживают исследования С. Арутюняна о связи загадки о пшенице с мифом об умирающем и воскресающем божестве (1969 г.), загадки о лампаде с мифом о божестве солнца (1981 г.). Он научно обосновал духовную общность между армянским и древневосточными и переднеазиатскими народами.

Усовершенствовав своё учение об армянской мифологии, С. Арутюнян сделал его целостным и обогатил в последующих исследованиях данными армянского эпического фольклора, в частности, на основе собранных ранее и новых записей армянского героического эпоса.

В двухтомник „Мифы народов мира” (Москва, 1981-1982 гг.), и в „Мифологический словарь” (Москва, 1990 г.) были включены статьи С. Арутюняна об армянской мифологии. Позже они были переведены на немецкий и венгерский языки и принесли ему мировую известность.

Фундаментальный труд учёного „Армянская мифология” был удостоен премии Армянского Общенационального Культурного и Просветительского союза (1994 г.) и в 2000 г. был опубликован на средства этого же союза. Цель своего труда определил в предисловии сам автор. Наряду с выявлением структурных особенностей данного фольклорного жанра и осмысления процесса его формирования, фольклорист - мифолог отмечает, что он „с другой стороны задался с познавательной целью ознакомить научную общественность с веками сформированным и накопленным в армянской национальной традиции богатым наследием мифологических данных, в частности, имея ввиду исторические и типологические взаимосвязи, особенности и общности последних с индоевропейской культурой, и тем самым обосновать и выявить в этой всеобщей культуре унаследованное и сохранённое армянами и новизной, привнесённой ими в ту же культуру”.

По мнению рецензента книги, представителя армянской диаспоры, литературоведа В. Матеосяна, этот труд „по своей новизне заслуживает быть переведённым на один из западных языков”. „Великолепие представленного сырого

материала, логика исследования и научная основа достаточны для того, чтобы поставить эту работу в один ряд с трудами Манука Абеяна" ("Кам, Аналитический журнал", Лос-Анджелес, № 5, 2002, с. 246 – 247).

Другая область фольклороведческой деятельности С. Арутюняна охватывает практически все главные жанры заклинательного фольклора. В 1971 г. на русском языке была напечатана его статья „Реликты благословения при общественном жертвопоедании“, а в 1975 г.- монография „Жанр проклятия и пожелания в армянском фольклоре“, посвящённая самобытным фольклорным жанрам, на страницах которой впервые в арменоведении исследуются функциональные и типологические особенности проклятий-пожеланий, источники возникновения и формирования, начиная с клинописных и лапидарных надписей, письменных и устных свидетельств до оформления их как самостоятельного жанра. Изучение этих фольклорных жанров он завершил другим фундаментальным трудом – подготовкой сводного научного текста армянских заговоров и народных молитв с соответствующими научными комментариями, предисловием и словарём. Рукопись этого объёмного труда ждёт своего издателя. Вышеупомянутые труды С. Арутюняна основывали в армянской фольклористике научные учения о загадках и магическом фольклоре.

Самой обширной областью фольклороведческой деятельности С. Арутюняна является область армянской эпической словестности, в частности – национальный героический эпос и другие образцы эпического фольклора.

Его интерес к эпическому фольклору возник из безграничного почитания деятельности М. Абеяна. Ещё в 1959 г. на страницах журнала „Советакан граканутюн“ (№ 11) была напечатана статья аспиранта С. Арутюняна о выдающемся арменоведе „Великий столп арменоведения“. М. Абеян постоянно находится в центре его научно-профессиональных изысканий. К настоящему времени в научных журналах вышел в свет целый ряд статей, посвящённых характеристике и оценке деятельности вид-



ного ученого и обширная монография (Манук Абебян. Жизнь и деятельность, Ереван, 1970, 678 с.). Среди них особую ценность представляют „Теоретическая система армянской эпической традиции, разработанная Мануком Абебяном” (1990 г.), „Манук Абебян и героический эпос „Сасна црер” (1992 г.). „Манук Абебян как критик” (1998 г.). Примечательно, что в монографии С. Арутюнян уделит специальный раздел, посвящённый теории М. Абебяна об эпическом фольклоре („Манук Абебян”, с. 165 - 234). С. Арутюнян с безукоризненной тщательностью составил и прокомментировал VII и VIII тома трудов М. Абебяна (1975 и 1985 гг.). Взгляды самого С. Арутюняна на армянский эпический фольклор изложены в его статье „Армянская эпическая словесность” (на русском языке), помещённой в I томе трудов М. Абебяна (1966 г.). В сущности он продолжил, обогатил и поднял на новую ступень учение Г. Срвандзтяна, М. Абебяна и К. Мелик - Оганджяна об армянском эпическом фольклоре.

Совершенно закономерен интерес С. Арутюняна к выявлению новых вариантов национального героического эпоса. В 1973 г. исполнялось 100 лет со времени обнаружения эпоса „Сасна црер” Г. Срвандзтяном. В 1970-ые гг. С. Арутюнян предпринимает и организует в разных районах Армении научные экспедиции для выявления новых вариантов эпоса и сбора материалов о нём в среде выходцев из Западной Армении. При этом он руководствовался принципом М. Абебяна о том, что даже искажённые, кажущиеся незначительными рассказы представляют ценность. Результаты научной экспедиции превзошли все ожидания. Были подготовлены и напечатаны последующие третий (1979 г.) и четвёртый (1999 г.) тома научного издания армянского героического эпоса, состоящие преимущественно из вариантов, записанных во время экспедиции (в соавторстве с А. Саакян). Примечательно, что до этого на родине эпоса- Сасуне было сделано незначительное количество записей. Четвёртый же том научного издания преимущественно состоит из сасунских вариантов,

собранных в основном в наши дни; в него включены также несколько ранних записей. Продолжая дело своих великих предшественников, авторы издания снабдили тома научными комментариями, ценными предисловиями-исследованиями, словарями и указателями.

В 1977 г. был опубликован составленный С. Арутюняном сборник из 10 лучших вариантов эпоса, наделённый соответствующим научным аппаратом и „Историко-культурным очерком“. В этом небольшом, но весьма ценном „Очерке“ исследуются вопросы, относящиеся не только к данным 10 вариантам, но и к национальному героическому эпосу „Сасна црер“ в целом. Углубляя учение М. Абеяна о древнейших пластах эпоса, С. Арутюнян одновременно рассматривает ряд важных вопросов, связанных с происхождением армянского народа как самостоятельной ветви индоевропейской семьи языков, носящей влияние соседнего семитского мира, а также родственного Ирана. Он находит, что „... эпос со своими четырьмя ветвями отражает весь процесс истории армянского народа от возникновения до наших дней“ (1977, с. 640). Армянский эпический фольклор, в частности, героический эпос, учёный рассматривает и освещает в плоскости взаимоотношений с соседними народами (персами, курдами). С этой точки зрения особый интерес представляют исследования С. Арутюняна „Отклики „Сасна црер“ в „Шараф наме“ (в соавторстве с Гр. Бартикяном, 1975 г.), „Отражения иранской духовной культуры в древней армянской традиции“ (1994 г.), где он убедительно подтверждает мнение, что духовная культура веками бок о бок живущих народов имеет не только типологические общности, но и взаимовлияет, обогащает друг друга и часто сохраняет ценные сведения, как например в „Шараф наме“ сохранилась, правда, в „изменённом и переосмысленном“ виде повесть о Давиде.

Фольклороведческая деятельность С. Арутюняна в последние годы относится преимущественно к лирическому жанру фольклора – хагику (четверостишиям). Под его

руководством и при его непосредственном активном участии подготовлен новый сводный текст хагигов, охватывающий около 16.000 архивных единиц. Рукопись эта ждёт своего издания.

В научной деятельности именитого фольклороведа определённое место занимают вопросы, относящиеся к истории древней армянской литературы, в частности – связи и взаимовлияния отдельных жанров фольклора и литературы. Этим проблемам он посвятил такие свои ценные исследования, как „История армянской литературы и народное творчество в V – VIII вв.” (История армянского народа, т. II, 1984, сс. 439 – 473), „Отражения некоторых особенностей индоевропейского стихосложения в древнеармянской поэзии и фольклоре” (1987 г.) и ряд других работ, не относящихся непосредственно к литературе, но затрагивающих вопросы литературы и фольклора.

Отдельного внимания заслуживают статьи С. Арутюняна, посвящённые видным деятелям арменоведения (М. Абегиану, К. Мелик-Оганджяну, Г. Овсепяну, А. Ганалаяну, А. Мнацаканяну и др.) Он умеет оценить заслуги отдельных ученых, их вклад в определенную область науки, подчёркивая и раскрывая ту сторону творчества, которая созвучна его научной заинтересованности. Его публикации этого характера сегодня для многих могут служить образцом. Его перу принадлежит специальное исследование, посвящённое систематизированной новой истории арменоведческой, в частности – филологической мысли, охватывающее период 1870 – 1917 гг. („История армянского народа”, т. VI, Ереван, 1981, с. 898 – 920).

С. Арутюнян – опытный научный редактор: им отредактирован более двух десятков работ, в числе которых такие объёмные труды, как VII и VIII тома М. Абегиана, III и IV тома эпоса „Сасна црер”, „Очерки по истории армянской фольклористики” А. Ганалаяна, „Киликия” В. Свазлян и др.

С. Арутюнян ведет активную научно-общественную деятельность, живо реагирует на актуальные проблемы

национально-культурной жизни, волнующие армянскую общественность, является автором более 100 энциклопедических и газетных статей и рецензий.

С. Арутюнян имеет значительные заслуги в области научных разработок, научно-организационных работ и подготовки специалистов. Под его непосредственным руководством и с участием всего коллектива фольклористов в 1970 – 1980 гг. был переработан богатый фольклорный архив Института археологии и этнографии, с помощью ЭВМ составлен Генеральный цифровой каталог. Он руководил и руководит в институте тематическими группами „Народное творчество, театр и танцевальное искусство“, „Исследования по армянскому фольклору“, а также отделом документации фольклорных первоисточников, работой аспирантов и соискателей. В Ереванском государственном университете, других ВУЗ –ах республики С. Арутюнян долгие годы преподаёт „Фольклористику“, „Армянский фольклор“, „Историю древней армянской литературы“.

Монографии, статьи, фольклорные сборники, опубликованные С.Арутюняном, будучи весьма ценными научными трудами, служили и служат также важной познавательно-просветительской цели, знакомят народ со своей историей, возвращают им же созданные сокровища, внушая чувство национального достоинства и гордости, учат бережному отношению к наследию своих предков.

